ՎԱՀՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
VAHRAM SIMONYAN

ՄԱՍՈՆՈՒԹՅՈՒՆ-ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

XVIII դ. Եվրոպայում առաջացել էին ուսմունքներ, օրինակ ֆրանկմասոնական օթյակները, որոնք, ելնելով մարդու բնական իրավունքի տեսության դրույթներից, նպատակ էին հռչակել համաշխարհային նոր կարգ հաստատել: XIX դ. II կեսին և XX դ. սկզբին են սկսվում ռուսական մասոնականության վերաբերյալ աղբյուրների և քիչ թե շատ գիտական հետազոտության նախադրյալներ ու տարրեր պարունակող աշխատանքների հրապարակումները: Այդպիսի հեղինակներից կարելի է նշել Մ.Ն. Լոնգինովին, Մ.Մ. Կովալևսկուն, Ա Ն. Պիպինին, Ե.Ա. Կուշելևին, Ե.Պ. Կառնովիչին, Ի Մ. Օստրոգլազովին, ոմն Ն. Լ.-ին, Դ. Բորզյակովսկուն, Յու.Ի. Հեսսենին, Տ.Օ. Սոկոլովսկայային, Լ. Լվովիչին, Նիկ. Նիկեին, Ա.Դ. Տոլին, Վ.Ի. Սեմևսկուն և այլոց[1]: Բավական հետաքրքիր է մինչխորհրդային ժամանակներում լույս տեսած և 2002թ. վերահրատարակված մասոնության պատմության վերաբերյալ երկհատոր

---

[1] Ковалевский М. М., Масонство, "Русские ведомости", СПб, 1907, 21 октября,N241; Пыпин А.Н.,Библейская секта двадцатых годов, "Вестник Европы", СПб, тип. М.М. Стасюлевича и комп., 1871, кн. 3, с. 248-282; Նույնի`Пыпин А. Н., Материалы для истории масонских лож, "Вестник Европы", СПб,1872, N 1, с. 174-214, N 2, с. 561-603; Նույնի` "Общественное движение в России при Александре I", СПб, 1871, Изд. 4, СПб, 1908, СПб, Академический проект, 2001, 560 с.; [Кушелев Е.А., Записки о масонских ложах] Уничтожение масонских лож в России в 1822г, "Русская старина", СПб, тип. В.С. Балашова, 1877, т. 18, с.455-479, с.641-659; Карнович Е.П., Замечательные и загадочные личности XVIII и XIX столетий, СПб, 1884, 464 с.; Остроглазов И. М., О тайне "противонелепого" общества, "Русский архив", М., тип. Грачева, кн. 2, с. 340-344; Н.Л. "Франкмасонство как орудие английской внешней политики", Море и его жизнь, СПб, 1905, N 33-34, с.579-595; ЭбхЫЭЗ`Н.Л., "Франкмасонство и государственная измена", СПб, 1897, 97с.; Борзяковский Д., Франкмасонство и тайные общества древнего и нового мира, М., 1900, с.186; Гессен Ю.И., Евреи в масонстве. Опыт исторического исследования, СПб, 1903, 60с.; Соколовская Т. О., Из доносов на масонство, "Русская старина", СПб, 1908, т. 136, кн. 4, N 12. с. 683-688; Львович Л., Масоны: Сб. статей, помещенных в различных периодических изданиях, М., 1908, 94 с.; Նույնի` "Иезуиты, мартинисты и масоны", "Земщина", М., 1911, 11 мая; Ник. Нике, Преимущество о масонах, "Новое время", СПб, 1908, 28 ноября,(11 декабря), N11752; Толл С. Д., Масонское действо: Исторический очерк о заговоре декабристов, СПб, 1914, Переиздание, М.: 2000, 374 с.; Семевский В. И., Декабристы-масоны, "Минувшие годы", СПб, тип. "Энергия", 1908, N 2, с. 1-50; N 3, с. 127-170, N 5-6, с. 379-433; Лонгинов М. Н., Иван Парфильевич Елагин, "Русская старина", СПб, 1870, кн. 2, с. 612-616.

աշխատությունը[2]: Վերը թվարկված հեղինակներից առավել ուշագրավ են Ա. Ն. Պիպինի, Տ.Օ. Սոկոլովսկայայի, Մ.Ն. Լոնգինովի և Վ.Ի. Սեմևսկու աշխատությունները: Հատկապես հագեցած է Վ. Սեմևսկու «Դեկաբրիստներ-մասոններ» աշխատանքը, որտեղ հեղինակն անդրադառնում է վերոհիշյալ ուսումնասիրողների և այլոց աշխատանքներին ու դատողություններին և ներկայացնում է դեկաբրիստ գործիչներից ոմանց նախկին մասոնական անցյալը և նրանցից շատերի ու մասոնների միջև հարաբերությունների սառեցման պատճառները: Վ. Սեմևսկու աշխատությունը տեղեկություններ է պարունակում մասոնականությանն անդամակցած դեկաբրիստների կոնկրետ թվի և օթյակների մասին, որոնց նրանք անդամակցել են: Նա տեղեկություններ է հաղորդում նաև դեկաբրիստների գործով զբաղվող «Հետաքննող կոմիտեին» տված այն ցուցմունքներից, որոնք վերաբերում և բնութագրում էին մասոնականությանը: Ցավոք, Վ. Սեմևսկին չէր կարող ներկայացնել մասոնականության իրական նպատակները և դրա կապն ու ակնկալիքները դեկաբրիստների հետ, քանի որ շատ աղբյուրներ դեռ հրապարակված չէին: Մասոնականության հանդեպ դեկաբրիստների հարաբերությունների սառեցման պատճառը Վ. Սեմևսկին համարում է այն, որ դեկաբրիստները մասոնականության մեջ չեն գտել այն, ինչ փնտրում էին: Իսկ ինչ էին փնտրում դեկաբրիստները, Վ. Սեմևսկին ևս չի մանրամասնում: Խորհրդային ողջ շրջանում մասոնության և մասոններ-դեկաբրիստներ առնչությունների վերաբերյալ լուրջ աշխատություններ չեն ստեղծվել, քանի որ այդ հարցերը համարվել են հասարակական-քաղաքական կյանքում լուրջ դերակատարում չունեցող երկրորդական խնդիրներ: 1991թ. մինչև մեր օրերը հետխորհրդային շրջանում Ռուսաստանում առավել անկաշկանդ են ուսումնասիրվում նախկինում արգելանքի տակ դրված շատ փաստաթղթեր, ոստիկանական և գաղտնի ծառայությունների արխիվներում եղած նյութեր, որի արդյունքում տպագրվում են ոչ միայն մասոնական գրականություն, այլև ռուսական մասոնականությանը վերաբերող գիտական աշխատանքներ, հոդվածներ, ակնարկներ: Այդպիսի հեղինակներից արժեքավոր են Ս.Վ. Արժանուխինի, Վ.Է. Բաղդասարյանի, Վ. Բուլշակովի, Վ. Նովիկովի, Ե. Լեբեդևայի, Մ.Պ. Հոլլի, Ա.Ի. Սերկովի, Մ. Կալաշնիկովի, Օ.Ա. Պլատոնովի ուսումնասիրությունները[3]: Սակայն այս փուլի արժեքավոր աշխատությունները

---

[2] "История масонства. Великие цели. Мистические искания. Таинства обрядов", М. ЭКСМО-Пресс, 2002, 720 с. (Переиздание "Масонство в его прошлом и настоящем", в 2-х томах, М., 1914-1915. Таинства обрядов)".

[3] Аржанухин С. В., Философские взгляды русского масонства: По материалам журнала "Магазин свободнокаменщицкий". Екатеринбург УРГУ,1995, 224с; Багдасарян В.Э., Теория заговора в отечественной историографии второй половины XIX-XX вв, М., 1999, 516с.; Большаков В., "Масоны", Ч. 1-3, "Правда", М., 1992, 7, 13, 16

պատկանում են Դ.Դ. Լոթարևայի և Ս. Կարպաչովի գրչին: Դ. Լոթարևայի աշխատանքներից, թերևս ամենահաջողվածը Տ. Օ. Սոկոլովսկայայի առավել հայտնի աշխատանքների՝ մեկ գրքով հրապարակած գործն է[4]: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Ս. Կարպաչովի աշխատությունները[5]: Ինչպես այս հեղինակների գործերում, այնպես էլ առանձին ժողովածուներում[6] չեն բարձրացվում մեզ հուզող հարցադրումները, և դեկաբրիստական շարժման հետ մասոնական կապերը ներկայացված են մշուշապատ, թեթև ակնարկներով և եզրակացությունները ընթերցողին թողնելու միտումով: Դրա պատճառը, թերևս, այն է, որ հեղինակների մի մասը (իհարկե՝ ոչ բաց տեքստով) հանդես է գալիս մասոնականության, մի մասն էլ՝ հակամասոնական դիրքերից: XXI դ. առավել ուշագրավ աշխատություններից (իսկ դրանք շատ են) հարկ է անդրադառնալ, Ն. Բոգդանովի, Ա. Լոսեվսկու, Ա. Արխանգելսկու, Վ. Բոբրովնիկովի, «Ռուսիչ» թերթի խմբագրականի, Ս. Օսիպովի, Մ. Տուլսկայայի՝ տարբեր պարբերականներում հրապարակած հոդվածներին[7] և Ա.Ռ. Անդրեևի, Լ.Պ. Զամոյսկու, Վ.Ի.

мая; Новиков В. И., Масонство и русская культура, М., 1998, 495 с.; Лебедева Е., "Каменщики вне политики", "Московские новости", М., 1995, N 56, 20-27 августа, с. 29; Холл М.П., Энциклопедическое изложение масонской, герметической, каббалистической и розенкрейцеровской символической философии, Новосибирск: ВО Наука, Сибирская издательская фирма, 1993, 2-е изд., испр. 794 с.; Серков А. И., 250 лет масонства в России, М.: Российская государственная библиотека, 1993, 88 с.; Калашников В., "Вольные каменщики" строят единую Европу. Усилия ордена поддержки в администрации российского президента (Интервью с Великим мастером Объединенных Великих лож Германии Альфредом Коска), "Независимая газета", М., 2001, 5 октября; Платонов О.А., "Россия под властью масонов", М.: "Русский вестник", 2000, 110 с.

[4] Лотарева Д., "Соколовская Т., "Тайные архивы русских масонов"", М., 2007, 478 с.

[5] Карпачев С., Масонская интеллигенция России конца XIX-начала XX века, Научное издание, М., Центр гуманитарного образования, 1998, 231 с., ЭбхЫЭЗ՝ "Масонство и масоны России XVIII-первой половины XIX вв". Краткий очерк истории (Вопросы отечеств. истории: Межвуз. сб. научн. тр. отв. ред. А. В. Ушаков) М., МГОПУ, 1996, с. 11-27; ЭбхЫЭЗ՝ "Российское масонство XVIII-XX веков", М., 2000, 70 с.

[6] Масоны в России: Вчера...Сегодня...Завтра?..., Сб. научных тр. Ред. А. А. Королев, М., Институт молодежи, 1999, 158 с.; Российское масонство. 1800-1861, АКД, М., МГУ, 1991, 18 с..

[7] Богданов Н., "Роль врагов в убийстве царей (о заговоре тайных масонских обществ против российских самодержцев)", "Известия", 20 марта, 2006; Лосевский А., "Государственное преступление духа", "Известия", 12 мая, 2004; Архангельский А., "Про масонов, содомитов и живую жизнь", "Известия", 13 февраля, 2006, с. 5; Бобровников В. Г., Филантропическая деятельность масонских лож в России (1775-1822), Клио, СПб, 2004, N 3, с. 79-83; "Жидомасоны", "Русич", М., 2002, N 3, "Известия", Неделя, 2 марта, 2007, с. 6; Осипов С., "Масонские тайны", А и Ф, 1 августа, 2007; Тульская М., "Масонство-в массы! За разглашение орденских тайн могут перерезать горло и вырвать язык", М. НГ-Религия, 3 марта, 2004, Рец-на: Карпачев С. П., Путеводитель по масонским тайнам, М.: ЦГО, 2003;

Սախարովի և այլոց աշխատություններին[8]: Վերոհիշյալ հեղինակների աշխատանքներն ընդգծված հակամասոնական բովանդակություն ունեն, և այդ երևույթը կապում են չարի և դավադրական նպատակների հետ: Սակայն այս հեղինակներն էլ չեն անդրադառնում դեկաբրիստներից շատերի մասոնական անցյալի, կապերի ու նպատակների շուրջ հարցերին: Հետխորհրդային շրջանում թարգմանվում և հրապարակվում են է զոթերիզմին[9], մասոնականությանը, դրա պատմական ակունքներին, խորհրդանիշներին և ծեսերին նվիրված աշխատանքներ: Օտար հեղինակներից հիմնարար աշխատություններ են ստեղծել կոնսպիրոլոգ (գաղտնագետ) Լուիս Միգել Մարտինես Օթերոն, Ջոնաթան Բլեքը, Հայկե Օվուզուն, Տ. Դեդոպուլոսը, Ջ. Ռոբինսոնը և այլք[10]:

Անդրադառնանք Ռուսաստանում առաջացած մասոնական կազմակերպություններին, քանի որ XIX առաջին քառորդին դրանք երկրում գրեթե ազատ գործելու հնարավորություն էին ստացել, և այդ ժամանակաշրջանի ռուս պետական, հասարակական-քաղաքական և մշակութային գործիչներ, անդամակցել են դրանց: Ընդհանուր առմամբ, մասոններն իրենց ակունքները հասցնում էին մինչև աստվածաշնչյան Ադամ, որին համարում էին առաջին մասոն-որմնադիր՝ նկատի ունենալով այն, որ նա է եղել երկրի վրա առաջին շինարարը[11]: Ըստ ավանդության՝ ռուսական մասոնները, որպես առաջին

---

[8] Андреев А.Р., Асассины, карбонарии, розенкрейцеры, Масоны. М., "Традиция-Евролинц", 2001, 216с., Замойский А. П., Масонство и глобализм. Невидимая империя, 2-е изд., М.: ОЛМА-Пресс, 2001, 383с; Сахаров В. И., Русское масонство в портретах, М.: ООО "А и Ф Принт", 2004, 512с.

[9] Զգոթերիզմը գաղտնի գիտություն է, որը վերաբերում է մարդկային կյանքի խորքային-միստիկական էության շուրջ յուրահատուկ հայացքների ոլորտին: Այս ոլորտի մեջ մտնում են տեսակետներ (կոնցեպցիաներ), ուսմունքներ և դոկտրիններ, ինչպես նաև՝ Ինքնաճանաչման ճանապարհները և փորձը, այսինքն՝ այն ամենը, ինչ վերաբերում է մարդու Աշխարհի բնության մասին գաղտնի գիտելիքների նվաճումներին: Զգոթերիզմը ոչ մի գիտական ընկերակցության կողմից ճանաչման չի արժանացել (Վ. Ս.):

[10] Луис Мигель Мартинес Отеро, Масонство. История, Символы и загадки, "Евразия", Санкт-Петербург, 2005, 255с., Джонатан Блэк, Тайная история мира, М., "ЭКСМО", 2009, 637с., Хайке Овузу, "Символы Египта", Москва-Санкт-Петербург, "ДИЛЯ" 2008, 287с., Дедопулос Т., Масоны. Взгляд изнутри тайного общества. М.: Контент, 2007, 128с., Робинсон Дж., Рожденные в крови. Утраченные секреты масонства, М.: Эм. Сеттера Паблишинг, 2004, 368с.

[11] Карпачев Сергей, Тайны масонских орденов, Ритуалы Вольных Каменщиков, Москва, "Яуза-Пресс", 2007, с.9, տես նաև նույնի՝ Масоны. Словарь. Великое искусство каменщиков, Москва, АСТ, Олимп, 2008, էջ 254-258, որտեղ հեղինակը մասոնության նախապատմությունը բացատրում է հետևյալ կերպ, որպես երկրի վրա առաջին շինարար՝ մասոնները համարում են Ադամին: Իրենց սկիզբը նրանք կապում են եգիպտական բուրգերի շինարարության, եգիպտական քրմերի գաղտնի խորհուրդների, Սողոմոնի տաճարի կառուցման, աստվածաշնչյան վարպետ Խիրամի, Թալմուդի և Կաբալլայի ուսմունքների, հնագույն մոգության, միջնադարյան ալքիմիայի և այլ երևույթների հետ: Համառորեն պահպանվում է լեգենդը «Ազատ որմնադիրների

մասոն, համարում են Պյոտր Մեծին (1682-1725թթ), որը մասոնականության իբր անդամակցել է XVII դ. վերջին՝ Մեծ դեսպանության հետ միասին Եվրոպայում գտնվելու ժամանակ: Հետագայում, որպես Մեծարգո վարպետ, եվրոպական երկրների նման Ռուսաստանում մասոնական կարգ (Орден) է հիմնել Պյոտրի մերձավորներից Լեֆորտը: Այդ օթյակի Առաջին վերակացուն (Первый надзиратель) եղել է Գորդոնը, իսկ Պյոտր Մեծն, իբր, բավարարվել է միայն երկրորդ վերակացուի կոչումով[12]: *Սակայն այս ամենը չի հաստատվում գրավոր աղբյուրներով:* Փաստաթղթերով հաստատված ռուսական մասոնականության պատմությունը սկսվում է 1731թ., իսկ 1747թ. տեղի է ունեցել կառավարական մակարդակով առաջին հետաքննությունը, որի ժամանակ Ելիզավետա կայսրուհու (1741-1761) հրամանով Ա. Ի. Շուվալովը հարցաքննել է արտասահմանից վերադարձած կոմս Նիկոլայ Գոլովինին՝ պարզելու համար, թե ինչ են իրենցից ներկայացնում մասոնական կանոնադրությունները. և ովքեր են Ռուսաստանում մասոնական միաբանության անդամներ[13]: XVIIIդ. առավել հայտնի մասոն գործիչներից, որոնք նաև Ռուսաստանում մասոնականության տարածողներ են եղել, կարելի է նշել Թեոդոր-Հենրիխ Չուդինին, Մելիսինոյին, Ի. Պ. Ելագինին, բարոն Պ.Բ. Ռեյխելին, Ն.Պ. Տուրգենևին, Ն.Ի. Նովիկովին, Ի.Վ. Լոպուխինին, Ի.Պ. Տուրգենևին, Շվարցին և այլոց: Ռուսական մասոնական օթյակների առաջին միությունները սկսել են ձևավորվել XVIII դ. 70-ականներից: Դրանցից էին, այսպես կոչված, Առաջին Ելագինյան միությունները, Ռեյխելյան միությունը, որոնք 1776թ. միավորվել էին գերմանա-շվեդական

եղբայրության» և 1314 Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկի կողմից ողջակիզված միջնադարյան ասպետական Տաճարական միաբանության (Տամպլիերների) մագիստրոս Ժակ դե Մոլեի պատգամների և այդ միաբանության հետ սերտորեն կապված լինելու մասին:

Իրականում մասոնության արմատները հասնում են մինչև XVII դարի միջնադարյան արհեստավոր-շինարարների եղբայրությունները և եվրոպական ամենագետների (ինտելեկտուալների) գաղափարական որոնումները: XIV դարի անգլիական վավերագրերում հայտնվում է «ֆրանկմասոն» տերմինը, որն ավանդությունը կապում է փափուկ հանքանյութ հանդիսացող «ազատ» քարերի (օրինակ՝ մարմարի, կրաքարի) հետ, որոնք, ի տարբերություն մնացած քարերի, օգտագործվում էին ավելի նուրբ և գեղարվեստական աշխատանքների համար: Այս տերմինը սկզբնապես մատնանշում էր առավել որակավորված աշխատողներին, իսկ ֆրանսիական ավանդությունը «ազատ» ("вольный", "свободный") հասկացությունը կապում է ֆեոդալական Եվրոպայով մեկ շինարար-արհեստավորների ազատ տեղաշարժվելու հնարավորության հետ: Մասոնության մեջ խիստ ամուր են պահպանվել միջնադարյան շինարարական եղբայրությունների ծեսերը, որոնք արտահայտվում են Միաբանության որոշակի գաղտնիության մեջ: Միաբանության (Օրդենի) սկզբնական կառուցվածքային միավորը օթյակն է, որը ղեկավարում են Ավագ վարպետը և երկու վերակացուները:

[12] Карпачев С., Тайны масонских орденов, նշվ. աշխ., էջ 29.

[13] "Лотарева Д., ""Соколовская Т., , Тайные архивы русских масонов", М., 2007, ст. 11 (Ս. Կարպաչովը ազգանունը նշում է «Գոլովնին» ձևով -էջ 29).

միստիկական հիմունքներով: Այն գոյատևել է մինչև 1780թ. և ինքնալուծարվել: 1786թ. Ի.Պ. Ելագինը հիմնել է երկրորդ Ելագինյան միությունը: Ֆրանսիական մասոնականության ներթափանցումը Ռուսաստան սկսվել է XVIII դ. 50-ականներից և կապված է եղել Թեոդոր-Հենրիխ Չուդիի անվան հետ: Շվեդական ասպետական մասոնության հիմնադիրը Ռուսաստանում եղել է իշխան Ա.Բ. Կուրակինը: XVIII դ. Ռուսաստան են մուտք գործել Եվրոպայում գոյություն ունեցող մասոնականության բոլոր հիմնական՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական, շվեդական, շոտլանդական ուղղությունները: Մոսկվայում, հայտնի էր 27 մասոնական օթյակների գործունեության մասին, որոնց կազմը խայտաբղետ էր: Ռուսական իշխանությունների վերաբերմունքը մասոնության հանդեպ ունեցել է հետևյալ դրսևորումները. Ելիզավետա կայսրուհու (1741-1761 թթ.) ժամանակ այն զգուշավոր-հետաքրքրասիրական էր (նա վերահսկում էր նրանց, բայց չէր խառնվում գործունեությանը), Պյոտր III-ի ժամանակ դրական էր, քանի որ, ամենայն հավանականությամբ, նա ինքն էլ մասոն էր: Եկատերինա II Մեծի (1762-1796 թթ.) օրոք վերաբերմունքը սկզբում բարյացակամ, հետո ծաղրական էր: Կառավարման վերջին շրջանում նրա վերաբերմունքը խիստ բացասական էր. Եկատերինա II-ը 1792թ. ռոզենկրեյցերների մասոնական օթյակի ջախջախումով արգելում է մասոնական օթյակների գործունեությունը Ռուսաստանում[14]: Ըստ ռուսական պատմագիտության՝ հիմնական պատճառը Եկատերինա II-ի դժգոհությունն էր գահաժառանգ Պավելի հանդեպ մասոնների, մասնավորապես՝ Ն.Ի. Նովիկովի գլխավորած օթյակի ցուցաբերած հետաքրքրությունների ու Պավելի հետ կապեր հաստատելու ձգտման համար[15]: Պավել I-ը (1796-1801) իր կառավարման առաջին շրջանում շատ բարյացակամ էր մասոնականության հանդեպ և նույնիսկ ցանկացել էր պաշտոնապես թույլատրել նրանց գործունեությունը, սակայն 1799թ. ստորագրում է մասոնական կազմակերպությունների գործունեությունն արգելող հրամանագիր: Այսպիսի հակասականությունը բնորոշ էր Պավել I-ի բռնկուն, անհավասարակշիռ բնավորությանը[16]: Մասոնականությունը Ռուսաս-

---

[14] Карпачев Сергей. Масоны, Словарь, նշվ. աշխ., էջ 356. (Ռոզենկրեյցերականությունը միստիկական դատողության միաբանություն է, որն առաջացել է XIV-XV դդ.: Վարկածներից մեկի համաձայն այն հիմնադրել է գերմանացի թափառող ասպետ Քրիստիան Ռոզենկրեյցերը, որը 1378 այցելել է Հնդկաստան և տեղի գիտնականներից իմացել է փիլիսոփայական քարի և կյանքի էլիքսիրի գաղտնիքները: Ըստ մյուս վարկածի՝ միաբանությունը հիմնել է XVII դարում Հովհան Վալենտին Անդրեան, որն էլ հորինել է վերոհիշյալ լեգենդը: Միաբանությունը, նաև՝ Ռուսաստանում, գոյություն ունի ցայսօր, ունի 10 աստիճան, իսկ վարդի և խաչի համադրումը խորհրդանշում է մարդ-Աստծուն, որն իբր գոյություն ունի յուրաքանչյուրի մեջ):

[15] Карпачев Сергей. Тайны масонских орденов. նշվ. աշխ., էջ 29-43:

[16] Лотарева Д., "Соколовская Т.", , նշվ. աշխ., էջ 13-14:

տանում բավականին հետաքրքիր զարգացումներ է ունեցել XIXդ. I քառորդին: Ալեքսանդր I-ը բավականին երկար ժամանակ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել մասոնության հանդեպ: Դա թույլ է տվել մասոնական որոշ գրքերում, օրինակ՝ ֆրանսիացի մասոն Թորիի՝ Փարիզում հրատարակած "Acta Latomorum" («Քարագործների գործողությունների օրագիր» (հաշվետվություն-Վ. Ս.) երկհատորյակում Ալեքսանդր I-ին համարել մասոն, սակայն ցայսօր դա փաստացի ապացուցված չէ[17]: Փաստերով ապացուցված է, որ նրա եղբայր, Մեծ իշխան Կոնստանտինը եղել է մասոնական «Միացյալ բարեկամներ» և «Ալեքսանդրը զինվորական հավատարմության հանդեպ» օթյակների անդամ[18]: Ճիշտ է, Ալեքսանդր I-ը մասոնական օթյակների գործունեությունը թույլատրող ուղղակի հրամանագիր չի ստորագրել, սակայն նրա վերաբերմունքն էլ բավական էր, որ նրա կառավարման տարիներին նրանց գործունեությունը ակտիվանար Ռուսաստանում: Պետությունը նույնիսկ փորձել է օգտվել դրանից և վերահսկողություն սահմանել մասոնական օթյակների գործունեության վրա՝ ցանկանալով վերահսկել հասարակական-քաղաքական միտքը և կանխել անցանկալի գաղափարների տարածումը երկրում: Այդ նպատակով, *1810թ. ոստիկանության նախարար Ա. Բալաշովն իր մոտ է հրավիրում մասոնական չորս օթյակների բարձրաստիճան կառավարիչների և ցարի անունից առաջարկում կամ անցնել պետության հովանու ներքո, կամ հաշվետու լինել պետությանը: Մասոնները ընդունում են երկրորդ տարբերակը: Միևնույն ժամանակ նրանց առաջարկվում է օթյակների կանոնադրությունների պետական նախագիծ, որին պետք է համապատասխանեցվեին բոլոր մասոնական կազմակերպությունների կանոնադրությունները[19]: Բացի այդ, նրանց առաջարկվում է կասեցնել նոր մարդկանց անդամագրումը և խստագույնս գաղտնի պահել իրենց կապերը կառավարության հետ:*

XIX դ երկրորդ տասնամյակում որոշակի փոփոխություններ են տեղի ունենում ռուսական մասոնության ներքին հարաբերություններում. «Պյոտրը ճշմարտության հանդեպ» օթյակի ղեկավար Ե.Ե. Էլլիզենը հրաժարվում է ճանաչել մասոնության բարձր աստիճանները՝ որպես նպատակ հռչակելով *ոչ թե կրոնը կամ բարոյականությունը, այլ՝ դատողությունը:* Նրանք հրաժարվում են միստիցիզմից և վերադառնում հին անգլիական համակարգին: Վեճը հասնում է այնտեղ, որ հայտնի մասոն կոմս Մուսին-Պուշկին-Բրյուսը և Բյոբերը դիմում են կառավարությանը, որ թույլատրվի բաժանել օթյակները 2 մասի, մեկը՝ Մուսին-

---

[17] Семевский В. И., Декабристы-масоны. "Минувшие годы", СПб, Тип. "Энергия", 1908, N 2, с. 15.
[18] Карпачев Сергей, Масоны. Словарь, նշվ. աշխ., էջ 222:
[19] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 2, էջ 18-19:

Պուշկինի գլխավորությամբ չէր ճանաչում բարձրագույն աստիճանները օթյակներում, իսկ մյուսը, Բյորերի գլխավորությամբ, շարունակում էր ընդունել և ճանաչել բարձրագույն աստիճաններն ու միստիցիզմը[20]: Նուտով էլլիզենին և Մուսին-Պուշկինին միանում են ևս երեք օթյակներ և 1815թ. օգոստոսի 30-ին հիմնում «Աստրեայի միության Մեծ օթյակը» (անունը վերցված է հունական դիցաբանության արդարության աստվածուհու անունից-Վ. Ս.): 1816թ. դրան են միանում «Միացյալ բարեկամներ» և «Երեք առաքինություններ» օթյակները, որոնց անդամ էին Պ. Յա. Չաադաևը, ապագա շատ դեկաբրիստներ, գրողներ, այդ թվում նաև՝ Ա. Գրիբոյեդովը: Մասոնական մյուս միությունը ձևավորվում է «Գավառական Մեծ օթյակի» շուրջ: 1822թ. տվյալներով այն իր հովանու տակ ուներ 7 արհեստանոց՝ 230 անդամներով[21]: Հետաքրքիր է, որ դեկաբրիստ մասոնների զգալի մասը եղել են երկու օթյակի անդամներ: «Միացյալ բարեկամներ օթյակի» անդամներ են եղել Պ. Պեստելը, Պ. Չաադաևը, Ֆ. Շախովսկոյը, Մ. Միտկովը, Մ. Ի. Մուրավյով-Ապոստոլը, իշխան Ի. Դոլգորուկին և այլք: Այդ նույն օթյակի անդամ են եղել նաև Ա. Գրիբոյեդովը և ժանդարմների ապագա ղեկավար գեներալ-մայոր Ա. Բենկենդորֆը[22]: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ մասոնական օթյակների անդամների կազմը բավական խայտաբղետ էր և ընդգրկում էր տարբեր հայացքների տեր և տարբեր սոցիալական խավերի պատկանող մարդկանց: «Երեք առաքինությունների օթյակի» անդամ են եղել Ա.Ն.Մուրավյովը, Ս.Ի.Մուրավյով Ապոստոլը, Ն.Մ. Մուրավյովը, Ս.Պ.Տրուբեցկոյը, Պ.Պ.Լոպուխինը (որը հետագայում գլխավորեց այս օթյակը), իշխան Ս.Գ.Վոլկոնսկին: Հետագայում այս օթյակին անդամակցում են նաև «Միացյալ բարեկամներ օթյակի» անդամներ Պ. Պեստելը, Ֆ. Շախովսկոյը, Մ. Ի. Մուրավյով-Ապոստոլը, իշխան Ի. Դոլգորուկին: «Երեք առաքինությունների օթյակը» հիմնադրվում է առաջին դեկաբրիստական կազմակերպության՝ «Փրկության միության» հիմնադրման ժամանակ: Վերջինիս հիմնադիրներից շատերը այդ նույն ժամանակաշրջանում փաստորեն եղել են մասոններ: Այս հանգամանքը չէր կարող չանդրադառնալ «Փրկության միության», հետագայում նաև՝ «Բարօրության միության» գործունեության վրա: Հայտնի է, որ վերը թվարկված մարդիկ այս «Միությունների» կառուցվածքում և ծրագրային որոշ դրույթներում ձգտել են ներմուծել և կիրառել մասոնության փորձը[23]: 1822թ. Ալեքսանդր I-ն արգելում է գաղտնի կազմակերպությունների, այդ թվում նաև՝ մասոնական օթյակների գործունեությունը Ռուսաստանի ողջ

---

[20] Семевский В. И., նշվ. աշխ., N 2, էջ 25:

[21] Карпачев Сергей, Тайны масонских орденов,...նշվ. աշխ., էջ 47:

[22] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 3, էջ 137:

[23] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 3, էջ 137-146:

տարածքում: Սակայն, մինչ այդ էլ պատմագիտությանը հայտնի են տարբեր մարդկանց անուններ, որոնք կայսրից պահանջում էին արգելել մասոնական օթյակների գործունեությունը՝ դրանք համարելով այլախոհության տարածման օջախներ: Նախևառաջ դա պահանջում էին ոչ մասոնները: Օրինակ, գնդապետ բարոն Դիբիչը՝ Գլխավոր շտաբի պետ Ի. Դիբիչի եղբայրը, 1816թ. փետրվարին Մեյսենից իր եղբորն ու գեներալ-ֆելդմարշալ Բարկլայ-դե-Տոլլիին հասցեագրված գաղտնի գրություններում ձգտում էր նրանց համոզել մասոնականության վտանգավորության շուրջ: Նա չէր խրախուսում պետության կողմից գաղտնի ընկերությունների հանդեպ ցուցաբերած հանդուրժողականությունը, այլ, ընդհակառակը, փաստում էր, թե ինչպես են Ֆրանսիայում, Վարշավայում, Պետերբուրգում գաղտնի ընկերությունների մեջ հավաքագրում ռուս սպաների: Բարոն Դիբիչն անհարիր էր համարում ռուսական բանակի սպաների շրջանում այն ոգու և գաղափարների տարածումը, որն առկա էր պրուսական արքունական գվարդիայի սպաների շրջանում, որոնք հայտարարում էին, որ թագավորներ հարկավոր չեն, որ համաշխարհային լուսավորությունը պահանջում է հանրապետական կարգերի հաստատում: Դիբիչի վկայությամբ, նմանատիպ հայտարարություններ նա լսել էր նաև Բարկլայ-դե-Տոլլիի շքախմբի սպաների շրջանում, ինչպես նաև նշում էր այն փաստը, որ գաղտնի միությունների անդամները ձգտում էին իրենց շոշափուկները տարածել նաև կայսերական գվարդիայի և գեներալական շտաբների մեջ: Առավել ուշագրավ է այն, որ մասոնականության վտանգների մասին կառավարությանը տեղեկացնում և հալածական (ռեպրեսիվ) քայլերի էին դրդում նաև ոչ միայն նախկին, այլև գործող մասոններից ոմանք: Նրանցից «Մեռնող Սֆինքս» մասոնական օթյակի ղեկավար Ա. Ֆ. Լաբզինը, որը 1816թ. մայիսի 28-ին լուսավորության նախարար Ա.Ն.Գոլիցինին հասցեագրված նամակում դժգոհություն էր հայտնում շատացող մասոնական օթյակների կապակցությամբ և առաջարկում էր խստացնել դրանց բացման գործընթացները, որպեսզի *դրանք չդառնան աթեիզմի բներ և չայլասերեն երիտասարդությանը:* 1821թ. մայիսի 12-24-ը հղած իր զեկուցագրերում Լեհական թագավորության տարածքում մասոնների գործունեությունը դադարեցնել էր առաջարկում նաև Ն.Նովոսիլցևը: Արդյունքում՝ 1821թ. սեպտեմբերի 25-ին մասոնականությունն արգելվում է Լեհաստանում: Ուշադրության են արժանի բարձրաստիճան մասոն, «Աստրեայի Մեծ օթյակի» Մեծ վարպետ, գեներալ-լեյտենանտ և սենատոր Կուշելևի՝ ցարին հասցեագրված երկու նամակները, որոնցում նա Ալեքսանդր I-ին առաջարկում էր վճռական միջոցներով մասոնական կազմակերպությունների գործունեությունը կամ կարգավորել կառավարության կողմից առաջարկած կանոնադրության նախագծով կամ էլ՝ դադարեցնել դրանց գործունեությունը: Հետաքրքիր է, որ

Կուշելևն իր նամակները ցարին փորձել է հանձնել անձամբ՝ վախենալով, որ դրանք կարող են բացվել Ալեքսանդրի շրջապատում եղած որևէ մասոնի կողմից, և նամակները ոչ միայն տեղ չէին հասնի, այլև կարող էին իր հետ հաշվեհարդար տեսնել, որպես երդմնազանց[24]: Գաղտնի կազմակերպություններն արգելելու մասին Ալեքսանդր I-ի հայտնի հրամանագրի հրապարակման գործում, կարևոր դեր է խաղացել նաև Յուրևյան մենաստանի վանահայր Փոտը: Թե Եվրոպայում և թե Ռուսաստանում գործող մասոնական կազմակերպությունները XVIII դ և XIXդ. առաջին քառորդին առաջնորդվում էին հայտնի մասոն, քահանա և աստվածաբանության դոկտոր Զեյմս Անդերսոնի կողմից 1721թ. կազմված և 1723թ. հրատարակված «Կանոնադրությունների գրքերով» (կամ՝ «Սահմանադրությունների գրքեր»-ով)[25]: Այս աշխատությունը ցայսօր վայելում է մասոնների համակրանքը: Ռուսաստանում XVIII դ. վերջին և XIX դ. առաջին քառորդին տարածված էր նաև հերցոգ Ֆերդինանդ Բրաունշվեյգցու գլխավորությամբ 1782թ. Վիլհելմսբադում տեղի ունեցած մասոնների կոնվենտում (ժողովում) հաստատված «Ազատ որմնադիրների կանոնադրությունը», որը, ռուսական մի ձեռագրի համաձայն, հաստատվել է Սանկտ-Պետերբուրգում՝ 1787թ.[26]: Գոյություն են ունեցել մասոնների գործունեությունը կարգավորող այլ կանոնադրություններ ևս: *Կանոնադրություններից երևում է, որ մասոնները կոսմոպոլիտներ էին, այսինքն՝ նրանց հայրենիքը ողջ տիեզերքն էր: Մասոնի համար բոլոր ռասսաները և ազգերը հավասար էին: Նրանք չպետք է ազգայնական կամ ռասսայական նախապաշարումներ ունենային: Ամեն ինչ հիմնված էր մերձավորի հանդեպ սիրո պատվիրանի վրա: Մասոնը պետք է ամեն քայլի դիմեր, որ հավասարություն լիներ օրենքի առաջ: Մասոնական օթյակներում տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող մարդիկ շփվում էին հավասարը հավասարի հետ և գլխավորը ոչ թե պաշտոնն ու ծագումն էր, այլ եղբայրությունը: Մասոնությունը քարոզում էր նաև կրոնական հանդուրժողականություն կամ խղճի ազատություն: Մասոնական օթյակի անդամ կարող էր լինել նաև այլ դավանանքի տեր մարդը, չնայած, որ նրա հիմքում ընկած էր քրիստոնեությունը: Մասոնները կողմ էին նաև խոսքի ազատությանը՝ գտնելով, որ յուրաքանչյուր մարդ իր մտքերն ազատ արտահայտելու իրավունք ունի: Կազմակերպության ներսում արգելվում էին կրոնական, ազգայնական և այլ կարգի վեճերը, իսկ երբեմն առաջացող բոլոր*

---

[24] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 2, էջ 26-50: Երդմնազանցության դեպքում մասոնները կատարում էին հաշվեհարդար: Այս մասին տես նաև՝ Карпачев Сергей, Масоны, словарь, էջ 214:

[25] Карпачев Сергей, Тайны масонских орденов, с. 11 (տես թիվ 3 հղումը).

[26] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 2, էջ 7:

կարգի վիճաբանությունները լուծվում էին կազմակերպության ներսում՝ հատուկ սահմանված օրենքներով, և բոլորը պետք է ենթարկվեին ընդունված որոշմանը, քանի որ համանման երդում էին տվել մասոնական օթյակին անդամակցելիս[27]*:* Ըստ կանոնադրության, *մասոնի համար առաջին ու բարձր աստիճանին Աստվածն էր ու նրան տված երդումը: Հաջորդ աստիճանին միապետն էր՝ որպես Աստծո օրենքները երկրի վրա պահպանող և իրագործող: Այս առումով մասոնները պետք է հավատարիմ լինեին միապետին, ենթարկվեին նրա կամքին և չքննարկեին նրա կայացրած որոշումները:* Ցարի հանդեպ հավատարմության մասին պնդումները երևում են XVIII դ. վերջի և XIX դ. առաջին քառորդի ռուսական մասոնների հրապարակումներում: Այսպես, երբ իշխող միապետերը մասոնության գործունեությունը արգելող հրամաններ էին արձակում, մասոններն ամենը բացատրում էին նրանով, որ միապետներին գցել էին թյուրիմացության մեջ: Ռուսական մասոնների պահպանողականությունն ցայտուն է արտահայտված «Աստրեայի Մեծ օթյակի» հրապարակած կանոնադրության մեջ, որտեղ ասված է, **որ այն եղբայրը, ով իշխանությունների դեմ որևէ գործողության կամ դավադրության մասնակից դառնար, պետք է անհապաղ գրկվեր բոլոր մասոնական կոչումներից և արտոնություններից ու վտարվեր նրանց շարքերից (տվյալ դեպքում խոսքը նաև երդմնազանցության մասին է, որի դեպքում տվյալ մարդը պետք է մահապատժի ենթարկվեր-Վ. Ս.)**: Սա հակասում է մեր կողմից հիշատակված անգլիական հին որմնադիր-քարագործների կանոնադրություններին, որոնցում ասվում էր, որ նման դեպքերում եղբայրը չպետք է վտարվեր կազմակերպությունից, այլ մյուս եղբայրները բոլոր ջանքերը պետք է գործադրեին, որ նրան դարձի բերեին[28]: Ռուսաստանում մասոնների ծավալած գործունեությունը, համաձայն նրանց գաղափարների և *ըստ առկա փաստերի, հիմնականում հասարակական-բարեգործական էր (գոնե՝ առերևույթ-Վ. Ս.):* Ռուսաստանում մասոնական օթյակների ծավալած հասարակական գործունեությունն ակտիվ է եղել և մեծ չափերի հասել XVIII դ. երկրորդ կեսին: Մոսկվայի մասոնների օգնությամբ բացվել է մանկավարժական ճեմարան, գիտական ընկերություններ, ուսանողական խորհուրդներ:[29] Նրանց հիմնած տպարանում, ուր տարում տպագրվել են 554 անուն գրքեր, այդ թվում նաև՝ ռուսական ռոզենկրեյցեր մասոնների թշնամի համարվող XVIII դ. Լուսա-

---

[27] Лотарева Д., "Соколовская Т.", նշվ. աշխ., էջ 21-125:

[28] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 5-6, էջ 381-383:

[29] Карпачев Сергей, Масоны, Словарь, նշվ. աշխ., էջ 251(Մարտինիզմը XVIII դարի ֆրանսիացի միստիկ Սեն-Մարտենի աստվածասիրական (теософская) համակարգ է, որի հետևորդների, մասնավորապես՝ Պոլյուսի կողմից XIX դարի վերջում հիմնվել է մարտինիստների միաբանությունը Ֆրանսիայում, որը գործում է ցայսօր: Այն հարաբերություններ ունի ոչ մշտական մասոնական ունկնդրությունների հետ):

վորականության գագաթներ Վոլտերի, Դիդրոյի, Ռուսսոյի աշխատությունները[30]: *Այսպիսով, եթե բնորոշելու լինենք մասոնականությունը, այն կարելի է համարել փիլիսոփայական-էթիկական և սոցիալ-հոգեբանական երևույթ, որն ընդգրկուն կերպով գործում էր կրոնական-հասարակական ոլորտում, ուներ կազմակերպված բնույթ և իր անդամներին որոշակի բարոյա-էթիկական պահանջներ էր ներկայացնում:* Ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող մասոնական փաստաթղթերում միշտ նշվում է, որ նրանք չպետք է զբաղվեին քաղաքականությամբ և հետապնդեին քաղաքական նպատակներ: Սակայն այս վերջին հանգամանքը ցայսօր վիճարկվում է պատմագիտության մեջ: Այդպիսի բանավեճ առաջացրած թեմաներից արժե նշել համաշխարհային հետագա մեծ նշանակություն ունեցած 1789-1794 թթ. ֆրանսիական Մեծ հեղափոխությանը մասոնների մասնակցության և խաղացած դերի վերաբերյալ հարցը[31]: Ա. Չուդինովը գրում է, որ աբբատներ Լեֆրանկը և Բարրյուելն առաջինն էին, որ բարձրացրեցին ֆրանսիական հեղափոխության մեջ «ազատ որմնադիրների» խաղացած դերի հարցը և որ նրանց գործերը հիմք են դարձել հակամասոնական ուղղության ներկայացուցիչների և դրանց դեմ հանդես եկող «դասական» պատմագիտության ներկայացուցիչներ Ժ. Մունյեյի, Ա. Մատյեզի, Դ. Լիգուլի և այլոց աշխատությունների հանդես գալու համար[32]: Հայտնի մասոն Լ.Ամյաբլը 1889թ. Ֆրանսիական հեղափոխության 100-ամյակին Փարիզում կայացած մասոնների Համաշխարհային վեհաժողովում հայտարարում է, որ XVIII դ. ֆրանսիական ֆրանկմասոններն են իրականացրել հեղափոխությունը և նրանց սկզբունքներն ամենևին էլ իմպրովիզացիա չեն: Նույն տեսակետներն է հայտնում մեկ այլ հայտնի մասոն Ժ. Կոլֆավրյուն[33]: Հարց է առաջանում. ինչու՞ 200 տարի ֆրանսիական հեղափոխության մեջ իրենց դերը կտրականապես ժխտող մասոնները ներկայումս փորձում են բացել իրենց խաղաքարտերը և ցույց տալ, որ իրենք դերակատարում են ունեցել այդ հեղափոխության մեջ: Գուցե որոշ ժամանակ անց նրանք խոստովանե՞ն, որ մեծ դեր են ունեցել նաև դեկաբրիստական շարժման և աշխարհի մյուս հեղափոխություններում և դավադրություններում: Ռուսաստանում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքները, կրելով եվրոպական և հատկապես՝ ֆրանսիական լուսավորիչների սոցիալ-քաղաքական մտքի ազդեցությունը, ունեին, սակայն, իրենց առանձնահատկությունները: Նախ՝ Ռուսաստանում

---

[30] Карпачев Сергей, Тайны масонских орденов, նշվ. աշխ., էջ 42:

[31] Чудинов А. В., Масоны и французская революция XVIII в.: Дискуссия длиною в два столетия, "Новая и новейшая история", М.,1999, N 1, с. 45-69.

[32] Նույն տեղում էջ 47:

[33] Նույն տեղում էջ 53:

չկային այն ինստիտուտները, որոնք ապահովում էին տարբեր հոսանքների գործունեությունն ու զարգացումը Եվրոպայում: Ռուսաստանը չուներ ոչ ընտրովի քաղաքական մարմին (խորհրդարան), ոչ էլ՝ ազատ խոսքի իրավունքը երաշխավորող օրենքներ: Երկրորդ՝ արգելված էր նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունների ստեղծումը: Այս հանգամանքը հաճախ հանգեցնում էր նրան, որ տարբեր հայացքների տեր մարդիկ ակամա հայտնվում էին միևնույն միավորման մեջ (գրական խմբակներ, սպայական ընկերություններ, մասոնական օթյակներ և այլն): XIX դ. առաջին քառորդին Ռուսաստանում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքները բաժանվում էին երեք ուղղությունների՝ *պահպանողականներ, լիբերալներ և արմատականներ*[34]: Պահպանողականների գաղափարներն, ընդհանրացված ձևով կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. 1) կրոնով սրբագործված միապետական կարգերի անքակտելիություն՝ որպես պետական կառավարման համաշխարհային միակ ձև, 2) մարդու բնության անկատարության ճանաչում, որը կարելի է հաղթահարել միայն լինելով եկեղեցու գրկում և ենթարկվելով միապետի հայրական իշխանությանը, 3) միապետի հովանու ներքո տարբեր դասերի ու խավերի գոյության ու զարգացման ճանաչում՝ որպես հիմք ընդունելով մարդկանց ֆիզիկական, սոցիալական և մտավոր անհավասարությունը, 4) պետական կառավարման գործում արիստոկրատիայի մասնակցության պարտադիր անհրաժեշտություն[35]: *«Ազատամիտ (լիբերալ)» հոսանքի* գաղափարախոսությունը հիմնականում ձևավորվում է լուսավորչական փիլիսոփայության դրույթների վրա ավելացված ազնվականական ազատասիրությունը: Ավելի շուտ լինելով բարոյահոգեբանական վիճակ՝ լիբերալ հոսանքը XIX դ. առաջին կեսին լայն տարածում է գտնում ազնվականության մի մասի շրջանում: Նրա մասն էին կազմում անկախ մտածելակերպը, բարձր հայրենասիրությունը, ինքնուրույն վարքը և ազնվականական արժանապատվությունը՝ որպես պատմազոյացման պայման: Ավելանում են հետևյալ հանգամանքները. նախ՝ Նապոլեոնի դեմ պատերազմից հետո ազնվականության այդ մասը հնարավորություն է ստանում ծանոթանալ և վերլուծել արևմտաեվրոպական երկրների փորձը, երկրորդ՝ նրանք սկսում են տարանջատել «հայրենիք» և «միապետ» հասկացությունները, գտնելով, որ առաջնայինը «հայրենիքն» է, երրորդ՝ այլ կերպ է սկսում ընկալվել նաև

---

[34] История России.Орлов А. С. Георгиев В.А., Георгиева Г., Сивохина Т.А.. Рекомендовано научно-методическим советом университетов в Российской Федерации по истории в качестве учебника для вузов. Изд-е 3-е, переработанное и дополненное, М., 2006, с. 223-224.

[35] История России. XIX век. В двух частях, т.1. Под ред. Тюкавкина В.Г.,М., Гуманитарный изд.центр Владос,2001, с.77-79.

ճորտատիրությունը: Ճորտական վիճակը *սկսում է դիտվել ոչ միայն ամոթալի, այլև՝ անշահութաբեր*[36]: *Ինչ վերաբերում է լիբերալների քաղաքական հայացքներին, ապա դրանք գրեթե նույնն էին, ինչ XIX դարի առաջին քառորդի քաղաքական երրորդ հոսանքի ներկայացուցիչների՝ «արմատականների» հայացքները:* Ռուսաստանի պատմության մեջ *«արմատականներ» այլ կերպ անվանվում են «դեկաբրիստները»՝ 1825թ. դեկտեմբերի 14-ին ձեռնարկած զինված ապստամբության միջոցով իշխանությունը գավթելու անհաջող փորձի ամսվա անունով:* Եվ լիբերալների, և դեկաբրիստների նպատակների գաղափարական հիմքում ընկած էր երկու խնդիր. բացարձակ միապետության սահմանափակում և ճորտատիրության վերացում: *Նրանց տարբերությունը այս նպատակներին հասնելու ուղիների մեջ էր: Լիբերալները գտնում էին,* որ իրենց նպատակներին *կարելի է հասնել խաղաղ ճանապարհով՝* ժողովրդին ու հասարակությանը լուսավորելու և բարեփոխումների միջոցով, իսկ արմատական-դեկաբրիստները՝ զինվորական հեղաշրջման միջոցով: Դեկաբրիստական շարժման հանդես գալու վրա ազդել են մի շարք գործոններ, որոնցից *կարևորը, սկսած XVIII դ., եվրոպական քաղաքակրթության և լուսավորչական արժեքների ներմուծումն էր:* Դա հանգեցնում է Ռուսաստանում կրթված ազատամիտ ազնվականական խավի ձևավորմանը: *Մյուս գործոնը XVIII դ. վերջի Ֆրանսիական Մեծ հեղափոխության և հաջորդած երկարամյա պատերազմների (մոտ քառորդ դար) թողած ազդեցությունն էր:* Ռուսական հասարակության մեջ հետաքրքրություն է առաջանում համաշխարհային մեծ իրադարձությունների հանդեպ: Քիչ դեր չի խաղում նաև *մյուս գործոնը.* դա հիասթափությունն էր Ալեքսանդր I-ի վարած ներքին քաղաքականությունից: Սկզբում նրա ներքաղաքական քայլերը հույս էին ներշնչում, որ Ռուսաստանում տեղի կունենան լուրջ փոփոխություններ, սակայն վերջում նա որդեգրում է պահպանողական և նույնիսկ՝ հետադիմական վարքագիծ: Գաղտնի ընկերությունների մեջ ներգրավված *ռուս սպաների վրա իրենց ազդեցությունն են թողել նաև* հեղափոխությունները Իսպանիայում և մի շարք իտալական պետություններում, ապստամբությունները Հունաստանում և Լատինական Ամերիկայի երկրներում: Այս հեղափոխություններում կարևոր և դեկավար դեր էին խաղում երիտասարդ սպաները[37] և ֆրանկմասոնները: XIX դ. սկզբին, ավելի ստույգ՝ 1812թ. հետո, լիբերալների և արմատականների հոսանքների գործունեության մեջ նկատվում է մի առանձնահատկություն. եթե մինչ այդ դարեդար գերիշխում էր հայրենիքի շահը, իսկ անձի (եթե դա ինքնակալը չէր)

---

[36] История России, XIX век, ч. I, նշվ. աշխ., էջ 79-80:

[37] История России с древнейших времен до наших дней, Под ред. д.и.н. проф. Сидорова А. В., М., 2007, с. 178.

ինքնագնահատումը մղված էր երկրորդական պլան, ապա դեկաբրիստական և լիբերալների առաջին խմբակներում, մնացած ամեն ինչից վեր, նախապատվությունը, ինչպես մասոնների մոտ, սկսում է տրվել մարդու անձին, նրա քաղաքական և տնտեսական ազատություններին[38]: Հետագայում, Նապոլեոնի դեմ արտասահմանյան արշավանքների ժամանակ, երիտասարդ ռուս սպաները Ֆրանսիայում շփվում են ֆրանկմասոնական կազմակերպությունների հետ, որոնք մեծ ազդեցություն են ձեռք բերում ռուսների վրա: Արդեն 1820-ական թթ. սկզբներին Ռուսաստանում հաշվվում էր 220 մասոնական օթյակներ, որոնց անդամակցում էին 3 հազար ազնվական և մտավորական: Վերջիններիս գրեթե կեսը Ռուսաստանում ծառայող օտարերկրացիներ էին[39]: *Դեկաբրիստական առաջին լուրջ կազմակերպությունը ստեղծվում է 1816թ. փետրվարին,* երբ «Սեմյոնովյան» և «Սրբազան» ընկերությունների մի խումբ սպաներ հիմնում են պատմության մեջ հայտնի *«Փրկության միություն»-ը* ("Союз спасения"): *1817թ. փետրվարին կազմակերպությունն ընդունում է «Կանոնադրություն» ("Статус") և պաշտոնապես անվանվում «Հայրենիքի ճշմարիտ և հավատարիմ որդիների միություն» ("Общество истинных и верных сынов отечества"): Պ. Պեստելի քանքերով «Կազմակերպությունը» նմանվելու էր իրական կարբոնարների և մասոնական ընկերության նպատակների մասին տեղյակ գաղտնի օթյակներին: Ըստ տեղեկացվածության աստիճանի, նրա անդամները բաժանվելու էին մի քանի կարգի. բուրգի վերևում իրական իշխանություն ունեցող դեկավարներն էին՝ «բոյարները», նրանցից հետո «մուժերն» էին, իսկ ամենաներքևում շարքային անդամները՝ «եղբայրները»[40]: Այս սկզբունքը կիրառվում էր նաև մասոնական օթյակներում: Կազմակերպության նպատակներ են հռչակվում բացարձակ միապետական իշխանության սահմանափակումն ու ճորտատիրության վերացումը:* Կազմակերպության ներսում տարածայնությունները վերաբերում էին այդ նպատակներին հասնելու խաղաղ և զինված միջոցներին: *Այս կազմակերպությունը բնույթով դավադրական էր և գործում էր գաղտնի:* Անդամների ընդունելությունը կատարվում էր խստագույն ընտրությամբ: Իր գործունեության վերջում, գվարդիական սպաներից կազմված այդ ընկերության անդամների թիվը հասնում է 30-ի[41]: Ինչպես տեսնում ենք, «Փրկության միության» մեջ

---

[38] Данилов А. А. Д. 18. История России с древнейших времён до наших дней в вопросах и ответах , учебное пособие, 2004, с. 108.

[39] Данилов А. А., История России с древнейших врем ён до наших дней, նշվ աշխ., էջ 109

[40] История России с древнейших времен до наших дней, նշվ. աշխ., էջ 179.

[41] История СССР, XIX –нач XX века, Изд-е второе, переработанное и дополн., Под ред. акад. АПН СССР И.А. Федосова, М., Изд-во "Высшая школа", 1987, с. 77-78.

ընդգրկվում էին տարբեր հայացքների տեր մարդիկ. այստեղ կային ինչպես *հեղափոխական բոնի մեթոդները չընդունող լիբերալ-լուսավորչականներ, այնպես էլ քիչ չէին միապետության պահպանման կողմնակիցները*, որոնք ձգտում էին սահմանադրությամբ սահմանափակել միապետի իշխանությունը: *Կային նաև բանակի միջոցով հեղաշրջում իրականացնելու կողմնակիցներ:* Ի դեպ, հայացքների այսպիսի խայտաբղետությունը բնորոշ էր դեկաբրիստական շարժման ողջ ընթացքին, նաև՝ մասոնական կազմակերպություններին: *1818թ. հունվարին Մոսկվայում ստեղծվում է մի նոր գաղտնի կազմակերպություն՝ «Բարօրության միություն»-ը ("Союз благоденствия"):* Ինչպես արդեն նշել ենք, դեկաբրիստական շարժման շատ դեկավարներ ու մասնակիցներ տարբեր հատվածներում եղել են մասոնական օթյակների անդամներ: Դրանց թիվը պատմագիտության տվյալներով հաշվվում է մոտ 50 մարդ: Նրանցից էին Պ.Ի.Պեստելը (1812-1817 թթ.), Ա.Ն. Մուրավյովը (1811-1818 թթ.), նրա եղբայրներ Մատվեյն ու Իվանը (1816-1820 թթ.), Սերգեյ և Իվան Մուրավյով-Ապոստոլները (1817-1818 թթ.), Ն.Մ. Մուրավյովը (1817-1818 թթ.), Ս.Պ. Տրուբեցկոյը (1816-1819 թթ.), իշխան Ֆ.Պ. Շախովսկոյը (1817-ից), Մ. Ֆ. Միտկովը (1816-1821 թթ.), Մ.Ա. Ֆոն-Վիզինը (1820թ.), իշխան Ս.Գ. Վոլկոնսկին (1812-ից), Մ.Ս. Լունինը և Ն. Բեստուժևը (1818-ից), Վ. Կյուխելբեկեր և Մ. Կյուխելբեկեր եղբայրները (1818-22 թթ.), Գ. Ս. Բատենկովը (1818-ից), Ֆոն-դեր-Բրիգենը (1817թ-ից), Ն.Ի. Տուրգենևը (1814-1817), Կ.Ֆ. Ռիլեևը (1820-1821 թթ.), Լորերը, Պ. Յա. Չաադաևը (1816-1821 թթ.), Իշխան Ի.Ա. Դոլգորուկին (1814-1818 թթ.), Մ.Ն. Նովիկովը (1816-1819 թթ.), Ֆ.Ն. Գլինկան (1816-ից), իշխան Պ.Պ. Լոպուխինը (1817-ից), կոմս Ֆ.Պ. Տոլստոյը (1818-ից), գեներալ Պ.Ս. Պուշչինը (1818-ից), Վլ. Գլինկան (1818-ից), Վ.Ֆ. Ռաևսկին (1818-ից), իշխան Պ. Տրուբեցկոյը (1818-ից) և այլք[42]: Սա հակասում էր «Աստրեայի մեծ օթյակի» և մասոնական ընդունված կանոնադրությունների դրույթներին, ըստ որոնց, մասոն եղբայրները, լինելով օթյակի անդամ, չէին կարող միևնույն ժամանակ զբաղվել հակապետական և դավադրական գործունեությամբ: «Միությունը» ստեղծում է հատուկ կառուցվածք և մարտավարություն: «Բարօրության միության» *ընդունած ծրագիրը բաղկացած էր երկու մասից՝ բացահայտ (լեգալ) և գաղտնի:* Առաջին մասը նախատեսված էր բոլոր անդամների համար. երկրորդը, որտեղ խոսվում է ինքնակալության տապալման մասին, հասու էր *հատուկ տեղեկացվածներին (посвященные):* Սա պայմանավորված էր կազմակերպության խռովարար մարտավարությամբ և դեկավարների գաղտնի, դավադիր գործունեությամբ: Բոլորի համար նախատեսված ծրագրային մասը վերաբերում էր կազմակերպության

---

[42] Семевский В. И., նշվ. աշխ., 1908, N 5-6, էջ 379-380:

ռազմական լուսավորական գործունեությունը: Ծրագրի գաղտնի (ամփոփ) մա-
սը վերաբերում էր ինքնակալության ընդունմանը, ճորտատիրության վերաց-
ման և զինված հասնելու ռազմական խռովարարական մարտավարությա-
մբ[43]: «Բարօրության միության» ծրագրում զարծյալ մեծ տեղ էր հատկացվում
լուսավորական գործունեությանը: Սառնական կազմակերպությունների ծրա-
գրերն էլ, ինչպես վերևում նշեցինք, նույնպես կազմված էին երկու մասից.
ռազմական բոլորի համար և գաղտնի միայն հատուկ տեղեկացվածների հա-
մար: Լուսավորչական գործունեությունը հատուկ էր նաև մասոններին: Կազմա-
կերպությանը անդամակցում են ոչ միայն արմատականներ, այլև լիբերալներ:
Այս ժամանակ է, որ կայսրին հայտնի է դառնում ազնվականական գաղտնի ընկերությունների գոյության մասին, սակայն նա դրանց մեջ իրեն դաշնակիցներ չի տեսնում: Լրտեսների միջոցով ստացված զեկույցներում տեղեկացվում է, որ կազմակերպությունը կայսեր դեմ մահափորձ կատարելու դավադրական հատուկ նպատակներ է հետապնդում: Խաղաղ քարոզչության և դավադիր-խռովարարական ակտիվ գործելակերպի կողմնակիցների միջև աճող տարաձայնությունները, ինչպես նաև՝ պետական լրտեսներից և պատահական մարդկանցից աշխատվելու ցանկությունը հանգեցնում են նրան, *որ 1821թ. հունվարին «Բարօրության միությունն» ինքնալուծարվում է:* Սրանից հետո, ինչպես և սպասատեսելի էր, ավելի ակտիվանում են արմատականները, որոնք էլ, 1821-1822 թթ. հիմնում են երկու նոր գաղտնի կազմակերպություններ՝ *«Հարավային» (ղեկավար՝ Պ. Պեստել) և «Հյուսիսային» (ղեկավար՝ Ն. Մուրավյով) ընկերությունները*[44]: Այս «Ընկերությունները» ժամանակի խոշոր կազմակերպություններն էին և *ստեղծում են բավական լուրջ ծրագրային փաստաթղթեր: Դրանցից մեկը Պ. Պեստելի «Русская правда»-ն էր, մյուսը՝ Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը»*[45]: Դեկաբրիստների գործունեությունն ավարտվում է 1825 թ. դեկտեմբերի 14-ի խռովության անհաջող փորձով: *Ալեքսանդր I-ին հաջորդած Նիկոլայ I-ը (1825-1855թթ.), զերծ լինելով իր վաղամեռիկ եղբորը հատուկ «ազատամտությունից» և անվճռականությունից, դաժան դատաստան է տեսնում կայսերական իշխանության և գոյություն ունեցող կարգերի դեմ ընդվզած դեկաբրիստների հետ:* Աքստամբությունը ճնշելուց հետո ստեղծվում է հատուկ Հետաքննող կոմիտե, որում ընդգրկվում են Մեծ իշխան Միխայիլ Պավլովիչը և բարձրաստիճան այլ անձինք, որոնց մեջ էր նաև Ալեքսանդրի մերձավորներից հայտնի բարեփոխիչ Մ. Մ. Սպերանսկին: ***Նիկոլայ I-ի առաջին***

---

[43] История России, Орлов А. С., Георгиев В. А., նշվ. աշխ., էջ 226:
[44] История России, Орлов А. С., Георгиев В. А., նշվ. աշխ...., էջ 227:
[45] История СССР, XIX – нач. XX века, նշվ. աշխ., էջ 80:

քայլը լինում է այն, որ 1820թ. բոլոր բարձրաստիճան զինվորականներից և ծառայողներից ստորագրություն է վերցվում առ այն, որ նրանք չեն հանդիսանում որևիցէ գաղտնի կազմակերպության անդամ: Այնուհետև նույն թվականին ցարի գրասենյակին կից ստեղծվում է Երրորդ բաժանմունքը, որը պայքարելու էր հեղափոխական շարժումների դեմ և վերահսկելու էր հասարակական մտքի ընթացքը: Կարծում ենք, որ հարկ է նորովի շարադրել նաև դեկաբրիստական շարժման պատմությունը, քանզի ցայսօր չպարզաբանված են մնում մի շարք հարցեր. ա) ի՞նչ էին որոնում «առաջադեմ» հայացքների տեր դեկաբրիստները «պահպանողական» բնույթի մասոնական կազմակերպություններում, բ) ստեղծելով գաղտնի հեղափոխական կազմակերպություններ՝ դրանց ղեկավարներն ինչու՞ էին շարունակում միևնույն ժամանակ անդամակցել մասոնական օթյակներին, գ) ի՞նչ ազդեցություն են ունեցել մասոնական գաղափարները դեկաբրիստական կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերում, դ) հիմնականում ի՞նչ պատճառներով էին որոշ դեկաբրիստներ հեռացել մասոնությունից՝ խախտելով տված երդումը և արդյո՞ք իսկապես հեռացել էին, ե) ի՞նչ ազդեցություն է ունեցել մասոնական օթյակների կազմակերպչական կառուցվածքը դեկաբրիստական կազմակերպությունների կառուցվածքի վրա, զ) ինչո՞վ բացատրել առավել հայտնի ռուսական մասոն գործիչների կողմից իշխանություններին մասոնականության վտանգավորության մասին տեղեկացումները, է) ի՞նչ կապեր էին պահպանում ռուսական մասոնները Եվրոպայի հետ, ը) ի՞նչ հանգամանքներից դրդված էին որոշ մասոններ կտրականապես հրաժարվել ճանաչել մասոնական օթյակների վերին աստիճաններն ու միստիցիզմը, ինչը հանգեցրել էր նրանց պառակտմանը, թ) ազգային ի՞նչ պատկանելություն ունեին դեկաբրիստ գործիչները, ժ) որո՞նք էին տարբեր կրոնների (կոնֆեսիաների) ու ռասաների մարդկանց հետ եղբայրանալու և մասոնական կոսմոպոլիտիզմի վերջնական նպատակները: Աղբյուրների հասանելիության դեպքում մեծ հետաքրքրություն կներկայացներ լուրջ համեմատություններ և վերլուծություններ կատարելու իլյումինատ մասոնների և դեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների նպատակների և դրանց հասնելու ձևերի ու միջոցների ընդհանրության վերաբերյալ: Հավելենք, որ եթե Ռուսաստանում որոշ միապետների կողմից մասոնականության հանդեպ ինչ-որ չափով եղել է դրական կամ բարյացակամ վերաբերմունք, ապա, ամենայն հավանականությամբ, այն պայմանավորված է եղել նրանով, որ մասոնական հրապարակված «կանոնադրություններում», գոնե առերևույթ, բարձրաձայնվել է միապետին անվերապահ ենթարկվելու և նրա վճիռներն ու կամքը չվիճարկելու մասին: Իսկ այն, որ ժամանակ առ ժամանակ կայսրուհիներն ու կայսրերը արգելել են մասոնական օթյակների գործունեու-

թյունը կամ պահել են ոստիկանական հսկողության ներքո, կարծում ենք, որ աչքի առաջ ունենալով եվրոպական հեղափոխական խմորումների դառը փորձը, և դրանցում տեսնելով նաև մասոնների խաղացած ոչ երկրորդական դերակատարումներն, ըստ երևույթին, ռուսական մասոնների գործունեության մեջ, նրանք կռահել են քողարկված և հեռահար նպատակներ: Դա են վկայում նախկինում մասոնական օթյակներին անդամակցած կամ գործող բարձրաստիճան շատ գործիչների հեռանալը, նրանց հետ կապերի խզումը, ինչպես նաև մասոնությունը Ռուսաստանում արգելելու մասին կայսրին համոզելու վկայությունները: Հնարավոր է՝ նրանք էլ էին ժամանակին հասկացել մասոնական օթյակների վերին աստիճանների խորհրդավոր ու քողարկված նպատակները: Եթե ընդունենք, որ մասոնականության գաղտնիությունը ռազմաֆեոդալական երկրներում ունեցել է լուսավորական-առաջադիմական էություն և կոնսպիրատիվ բնույթ, ապա ո՞րն է ստվերում այսօր գաղտնի մնալու, միստիցիզմի և նրանց խորհրդավոր ու մութ լինելու պատճառը: Գաղտնիք չէ, որ հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող երևույթների գաղտնիությունը, մութ ու անհասկանալի լինելը նեղ դավադրական ու կլանային էություն ունի և դրական հետևանքների չի կարող հանգեցնել: Ուսումնասիրելով համաշխարհային մասոնականության վերաբերյալ գրականությունը համոզվում ենք հետևյալում. ինչպես նախկինում, այնպես էլ այժմ մասոնականության և միստիցիզմի հետ կապված բոլոր մյուս գաղտնի կազմակերպությունների վերաբերյալ հնարավոր չէ լիարժեք և համակողմանի դատողություններ կատարել այն պարզ պատճառով, որ այդ ամենը կատարելու համար ցանկացած ուսումնասիրող նախ՝ պետք է ինքը դառնա մասոն կամ սեկտանտ, օժտվի գաղտնի խորհուրդների իմացությամբ ու գաղտնիքները չհրապարակելու մասին երդում տա, ինչով արդեն կբացառվի հանրությանն իր իմացածի ու տեսածի մասին իրազեկելը կամ էլ՝ նույն մասոնների գիտությամբ գրի և հրապարակի միայն այնքանը, ինչքան որ անհրաժեշտ կհամարեն իրենք՝ մասոնները: Այստեղ տեղին է մեջբերել ժամանակակից հետազոտող և գաղտնագետ Ջոնաթան Բլեքի հետևյալ նկատառումը. «Ակուլտային շրջանակներում արդեն վաղուց վեճեր են գնում, թե էզոթերիկ իմաստության մինչև ո՞ր աստիճանը կարելի է հասարակության սեփականությունը դարձնել և մատերիալիզմի դեմ պայքարում դա ինչքանով է օգտակար և որքանով՝ վտանգավոր...»[46]: Լուիս Միգել Օթերոն կատարում է հետևյալ եզրահանգումը. «Մասոնությանը մենք չպետք է վերաբերվենք անտարբեր կերպով, սակայն մեր ժամանակի համընդհանուր անգրագիտությանը տրվելով չպետք է կիսենք նաև այն

---

[46] Джонатан Блэк, Тайная история мира, Москва, 000, 2009, с. 598.

սնոտիապաշտությունը, թե մասոնությունը, ի հակակշիռ կրոնին, իրենից ներկայացնում է ամենազոր գաղտնի հասարակություն: Մենք պետք է մանրակրկիտ ուսումնասիրենք պատմական փաստերը՝ դրանք ընդունելով այնպիսին, ինչպիսին որ եղել են՝ համադրելով ընկած լեգենդար տերևը այն տերևին, որը կանաչում է հիմա ... մենք պետք է փորձենք Մասոնությանը նայել մասոնի աչքերով այնպես, որ մնում է ոչինչ չվրիպի մեզանից... Վերջապես, պատմական թատերաբեմում Մասոնությանը մենք չպետք է գլխավոր գործող դերը հատկացնենք, չնայած, որ, հատկապես այս տեսակետն են պաշտպանում դրա կողմնակիցներն ու հակառակորդները: Հասարակության ժամանակակից վիճակին հանգեցնող իրադարձություններում «Այրու որդիների» (Իսիդայի-Վ. Ս.) ավանդը, հարկավ չի դադարում լինել նշանակալից...»[47]: Չի կարելի բացառել, որ մասոնականության կողմնակիցների ու հակառակորդների պայքարն արհեստածին է, և այդ ամենը մասոնների կողմից գիտակցաբար է շրջանառվում, որպեսզի ավելի խորացնեն իրենց շուրջ եղած խորհրդավորությունն ու կյանքի բոլոր ոլորտներում իրենց անտեսանելի մասնակցության վերաբերյալ կարծիքը: Դրա համար էլ, ըստ մեզ, կարող է առաջանալ նաև մի երրորդ տարբերակ. դա մասոնական կազմակերպությունների կողմից իրենց պատմական անցյալի, դերի և արդի նպատակների իրական և, որն ամենակարևորն է, հոժարական բացահայտումն է (ինչպես, օրինակ, փորձերը՝ ֆրանսիական հեղափոխության պարագայում), ինչի հնարավորությանը կարելի է խստորեն կասկածել: Հուսով ենք, որ թե Ռուսաստանում և թե Հայաստանում մասոնականության հանդեպ գիտական շրջանակների հետաքրքրությունն ապագայում կօգնի ստանալ Ռուսաստանի XIX-XX դդ. պատմությանը վերաբերող շատ հարցերի գիտական լուրջ վերլուծություններ՝ կապված ռուսական կյանքի բոլոր ոլորտներին առնչվող մասոնականության կապերի իրական բացահայտման հետ:

Freemasonary-Related to Decembrists Relations Issue

The brief history of Russsian freemasonary from XVIIIth century to the first quarter of XIXth is presented in the article. There is a reflection on social-political currents occurred in Russia at the beginning of XIXth century, especially on decembristic movement. The attempt was made to show the ideological \and organaizational impact of Masonic organizations on decembristic movement. There are represented as briefly as possible about the discussed issue's more or less historical-scientific value representing the periods of pre-Soviet and post-Soviet authors' works.

[47] Луис Мигель Мартинес Отеро. Масонство. История. Символы издагадки. "Евразия" Санкт-Петербург, 2005, с. 225-226.